ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը Մայիսիննյան հաղթանակների կապակցությամբ.

Սիրելի հայրենակիցնե՛ր,

այսօր մենք ազգովի նշում ենք Մայիսիննյան հաղթանակների օրը՝ միաժամանակ գլուխ խոնարհելով այն հայորդիների առջև, ովքեր մաքառել են մեր հողի ազատության, հայրենի պետականության կերտման ու պահպանման համար, ովքեր իրենց կյանքի ու արյան գնով մեզ են ավանդել սրբազան այս հայրենիքը:

Բոլոր պատերազմները մեր պապերը, հայրերն ու եղբայրները մղել են պարտադրված՝ իրենց տունն ու երկիրը պաշտպանելու, թշնամուն դիմագրավելու նպատակով: Թե՛ 1945 թվականին Բեռլինում, թե՛ 1992 թվականին Շուշիում հայ սպաներն ու զինվորները մաքառում էին նույն նպատակի համար, նույն ազգասպան ու մարդասպան բռնակալ ոճրագործների դեմ, որոնք բնաջնջելու էին եկել մեր հայրենիքն ու նրա ժողովրդին:

Այդ հաղթանակները, որոնք ապրեցրել ու ապրեցնում են մեզ, ձեռք են բերվել հարյուր հազարավոր այրերի կյանքի ու արյան, աներեւակայելի, հերոսական մաքառումների գնով ու ոչ մի ժամանակ դրանք չեն մոռացվելու, դրանց դերն ու նշանակությունը երբեք չի խամրելու: Իսկ ապրողներս պետք է ձգտենք կերտել մի այնպիսի հզոր հայրենիք, որպեսզի ոչ մի թշնամի այլեւս չկարողանա խաթարել մեր խաղաղ ու ստեղծագործ զարգացման ընթացքը, չհանդգնի իր կամքը թելադրել մեզ՝ իր նոր բռնություններով ու ոճիրներով:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Մայիսիննյան հաղթանակների կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, խաղաղություն, բարօրություն ու երջանկություն, նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ, համահայկական նպատակների իրականացում:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան